

Գրանցված է

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկում

Նախագահ՝ Արթուր Զավադյան

« __ » _____ 2011թ.

ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ

1. «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի «Տեղեկատվության բացահայտման կանոնները» 5-րդ գլխից հետո լրացնել նոր 5¹ գլխով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Գլուխ 5¹. Տեղաբաշխման մասնակիցներին տեղեկատվության բացահայտումը տեղաբաշխման նստաշրջանի ընթացքում

- 1) Տեղաբաշխման նստաշրջանի ընթացքում տեղաբաշխման մասնակիցներին տեղեկատվությունը տրամադրվում է իրական ժամանակի ռեժիմում՝ տեղաբաշխման նստաշրջանի սկսման պահից մինչև տեղաբաշխման նստաշրջանի ավարտը:
- 2) Բաց ստանդարտ աճուրդի ընթացքում արժեթղթերի տեղաբաշխման մասնակիցներին տրամադրվող տեղեկատվությունը ներառում է՝
 - ա) տվյալ աճուրդի ընթացքում տեղաբաշխման մասնակիցների կողմից տեղաբաշխման համակարգ մուտքագրված, սակայն դեռևս չբավարարված Հայտերի ցանկը և դրանց բավարարման էական պայմանները (հայտի բավարարման էական պայմանները համապատասխանում են Օպերատորի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններ»-ում աճուրդի տարբեր եղանակների համար սահմանված հայտի բավարարման էական պայմաններին),
 - բ) Օպերատորի կողմից տվյալ աճուրդին թույլատրված՝ արժեթղթերի գնանշումների վերաբերյալ՝
 - (1) տվյալ աճուրդի ընթացքում տեղաբաշխման համակարգ մուտքագրված գնման և

վաճառքի լավագույն գները,

(2) տվյալ աճուրդի ընթացքում կնքված գործարքների առարկա արժեթղթերի քանակը,

(3) տվյալ աճուրդի ընթացքում տեղաբաշխման համակարգ գնման հայտ մուտքագրած տեղաբաշխման մասնակցի առևտրային կողը (անվանական բաց ստանդարտ աճուրդի դեպքում)

3) Տեղաբաշխման նստաշրջանի ընթացքում կնքված յուրաքանչյուր գործարքի մասին տեղաբաշխման մասնակիցներին տրամադրվող տեղեկատվությունը ներառում է՝

ա) տվյալ տեղաբաշխման նստաշրջանի ընթացքում կնքված յուրաքանչյուր գործարքի վերաբերյալ՝

(1) տեղաբաշխման գործարքի առարկա արժեթղթերի հապավումը,

(2) տեղաբաշխման գործարքի առարկա արժեթղթի գինը,

(3) տեղաբաշխման գործարքի կնքման ամսաթիվը և ժամը,

(4) տեղաբաշխման գործարքի առարկա արժեթղթերի քանակը,

բ) տեղաբաշխման տվյալ մասնակցի լիազորված ներկայացուցչի կողմից տվյալ տեղաբաշխման նստաշրջանի ընթացքում կնքված յուրաքանչյուր գործարքի վերաբերյալ՝

(1) տեղաբաշխման գործարքի առարկա արժեթղթերի հապավումը,

(2) տեղաբաշխման գործարքի տեսակը (առք կամ վաճառք),

(3) տեղաբաշխման գործարքի առարկա արժեթղթերի գինը,

(4) տեղաբաշխման գործարքի առարկա արժեթղթերի քանակը,

(5) տեղաբաշխման գործարքի ընդհանուր գումարը,

(6) տեղաբաշխման գործարքի հերթական տարբերակիչ համարը,

(7) տեղաբաշխման գործարքի կնքման ամսաթիվը և ժամը:

4) Տեղաբաշխման նստաշրջանի ավարտից հետո տեղաբաշխման մասնակիցներին տրամադրվում է տեղաբաշխման նստաշրջանի ընթացքում սույն կանոններին համապատասխան նրանց հասանելի տեղեկատվությունը՝ տեղաբաշխման նստաշրջանի փակման դրությամբ:

5) Սույն գլխով սահմանված տեղեկատվությունը տեղաբաշխման մասնակիցներին տրամադրվում է անվճար:»:

2. «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի «Տեղեկատվության բացահայտման կանոնների» 6-րդ գլխի 8) կետի է) ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«է) տվյալ առևտրային նստաշրջանի փակման պահին առևտրային համակարգում առկա գնման և վաճառքի լավագույն հայտերի գները (պարտատոմսերի դեպքում՝ տարեկան եկամտաբերությունները),»:

3. «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի «Տեղեկատվության բացահայտման կանոնների» 6-րդ գլխի 9) կետից հետո լրացնել նոր 9՛) կետով՝ հետևյալ բովանդակությամբ՝

4. «9՛) Օպերատորի կողմից հանրությանը բացահայտվող օրական տեղեկատվությունը տեղաբաշխման արդյունքների վերաբերյալ ներառում է՝

ա) թողարկողի անվանումը,

բ) տվյալ արժեթղթերի հապավումը,

- գ) տեղաբաշխման սկիզբը (օր/ամիս/տարի),
- դ) տեղաբաշխման ավարտը (օր/ամիս/տարի),
- ե) տեղաբաշխողի անվանումը,
- զ) տեղաբաշխմանը ներկայացված առաջարկությունների ընդհանուր ծավալը (արտահայտված ՀՀ դրամով),
- է) մրցակցային հայտերով ներկայացված առաջարկությունների ծավալը (արտահայտված ՀՀ դրամով),
- ը) ոչ մրցակցային հայտերով ներկայացված առաջարկությունների ծավալը (արտահայտված ՀՀ դրամով),
- թ) բավարարված առաջարկությունների ընդհանուր ծավալը (արտահայտված ՀՀ դրամով),
- ժ) տեղաբաշխված արժեթղթերի կտրման գինը (եկամտաբերությամբ աճուրդի դեպքում՝ կտրման եկամտաբերությունը),
- ի) տեղաբաշխված արժեթղթերի միջին կշռված գինը (եկամտաբերությամբ աճուրդի դեպքում՝ միջին կշռված եկամտաբերությունը):»:

5. Սույն փոփոխությունն ու լրացումներն ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով գրանցման պահից:

Հաստատված է
«ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ
դիտորդ խորհրդի որոշմամբ

_____ **Կարեն Զաքարյան**

«28» սեպտեմբերի 2011թ.
ք. Երևան
ՀՖԲ-01/134L